2021

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

05.03.2021թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտն առանցքային նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգում: Այն մարդկային կապիտալի կուտակման, որակական աճի ապահովման, երկարաժամկետ զարգացման, ինչպես նաև գիտելիքահեն հասարակության ու տնտեսության կառուցման անկյունաքարն է:

Այս համատեքստում ուսանողների ակտիվ ներգրավվածությունը և պահանջատիրությունը կարող են ձևավորել ուսանողակենտրոն կրթական միջավայր և նպաստել կրթության որակի շարունակական բարելավմանը:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) կարևորում է ուսանողների ներգրավվածությունը կրթության որակի ապահովման գործընթացներում և ուսանողների հետ համագործակցության և հետադարձ կապի ապահովման տարբեր ձևեր մշակում (ուսանողական հարցումներ, ֆոկուս խմբային հետազոտություններ, ֆորումներ և աշխատաժողովներ):

1.Հետազոտության նպատակը

2019-2020 ուսումնական տարվանից ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժինը (ՈԱԲ) իրականացնում է ուսանողական հարցում Ինստիտուտի առաջին կուրսի ուսանողների հետ, որը նպատակ ունի պարզելու սովորողների՝ ՀՖԿՍՊԻ–ում սովորելու որոշման վրա ազդող գործոնները, բացահայտելու տվյալ մասնագիտության ընտրության դրդապատճառները, վերհանելու ուսանողների կրթական ակնկալինքներն ու սպասումները և նրանց տեսանկյունից արժևորելու կրթական միջավայրի բարելավման առաջնահերթությունները:

2020-2021 ուսումնական տարում իրականացված հարցման արդյունքների վերլուծությունը միտված է նաև տեսանելի դարձնելու ուսանողի հետ հետադարձ կապի միջոցով ստացվող տեղեկատվության հիման վրա իրականացվող փոփոխությունների դինամիկան, քանի որ բոլոր այն գործընթացները և վերափոխումները, որոնք իրականցվում են ներբուհական կրթական համակարգում կարող են համարվել արդյունավետ, եթե բարձրացնում են ուսանողների սովորելու մոտիվացիան և ներգրավվածությունը կրթական միջավայրի բարելավման գործընթացներում:

2.**Հետազոտության ընտրանքը և մեթոդաբանությունը**

Սոցիոլոգիական ընտրանքը որոշելիս նախապես ենթադրվում է, որ հետազոտվող հատկանիշի նկարագրության ժամանակ հարցվածների հիմնական մասը՝ տվյալ դեպքում 68,2%-ը, համախմբվում է տվյալ փոփոխականի միջին արժեքի շուրջ, ընդ որում՝ միջինից հնարավոր տատանումները կարող են կազմել ոչ ավելի քան 10%[1]: Նշենք նաև 20% ընտրանքի սխալի մասին, որը գրեթե միշտ անխուսափելի է լինում քանակական հետազոտությունների ժամանակ: Պահպանելով սոցիոլոգիական հետազոտության ընտրանքի բոլոր կանոնները՝ հարցումը իրականացվել է առցանց՝ առաջին կուրսի 345 ուսանողների շրջանում:
Հարկ է նկատել, որ հարցմանը ներգրավված 99 ուսանող (28,7%) ընդհանրապես չի արձագանքել էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված առցանց հարցման հայտին: Ուսանողներից 24,3%-ը (84 հոգի) հրաժարվել է մասնակցել հարցմանը՝ մատնանշելով հստակ պատճառներ, ինչպես օրինակ՝ ազգային բանակ զորակոչվելը՝ (23 ուսանող), ուսանողական հարցմանը ուսանողության մասնակցության անկարևորությունը՝(27 ուսանող), սոցհարցմանը մասնակցելու հետաքրքրվածության և ցանկության բացակայությունը (15 ուսանող) և ժամանակի սղությունը (19 ուսանող):

Այսպիսով՝ հարցմանը մասնակցել է ընտրանքային կազմում ներառված 261 ուսանողներից 162–ը, որը կազմում է 62%:

3.Հարցման անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքը

Հարցումն իրականացվել է նախապես մշակված և ՀՖԿՍՊԻ Գիտական խորհրդի կողմից հաստատված հարցաթերթի հիման վրա (**տե՛ս Հավելված 1**) և անցկացվել է էլեկտրոնային տարբերակով: Հարցաթերթերը լրացվել են անանունության սկզբունքով: Էլեկտրոնային հարցման արդյունքները մշակվել են Google Doc-ի, իսկ բաց և կիսափակ հարցերը՝ ՈԱԲ–ի սոցիոլոգի կողմից:

[1]Բալասանյան Ս. Վարդանյան Ն.«ՔՀԿ հետազոտական կարողությունների գործնական զարգացման» ուղեցույց

1.ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությանը մասնակցել են ՀՖԿՍՊԻ Մարզչամանկավարժական (այսուհետ՝ ՄՄ) և Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման (այսուհետ՝ ԱՏՍՏԿ) ֆակուլտետների տարբեր ամբիոնների առաջին կուրսի 162 ուսանող: Հարցման մասնակիցների սեռատարիքային պատկերը ներկայացված է Գծապատկեր 1-ում և 2-ում:





Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, հարցմանը մասնակցած ուսանողների զգալի մասը՝ 79,6%-ը (129 ուսանող) արական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 20,4%-ը՝ (33 ուսանող) իգական սեռի:

Հարցմանը մասնակցած 162 ուսանողներից 159-ն է նշել այն ֆակուլտետը, որտեղ սովորում է: (Տե՛ս Գծապատկեր 3):



Ինչպես երևում է գծապատկերից, համաչափությունը գրեթե պահպանվում է: Հարցման մասնակիցների ներգրավվածությունը՝ ըստ ամբիոնների ներկայացված է գծապատկեր 4-ում:



Ինչպես երևում է հարցման արդյունքներից, հետազոտությանը ամենաակտիվ ներգրավվածությունն են ունեցել՝ Մարզական լրագրության (100%), Ֆիզիկական վերականգնման (77,7%) Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի (78,6%), ՖԴՏ մեթոդիկայի և ԱՖԿ (66,7%) ամբիոնները:

Համեմատաբար պասիվ ներգրավվածություն են ունեցել ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի (85-ից 9 ուսանող) և մարզախաղերի (25-ից 8 ուսանող) ամբիոնների ուսանողները:

Հարցաթերթում ներառված հաջորդ հարցը վերաբերում էր ուսանողների ընդգրկվածությանը՝ ըստ քաղաքային և մարզային համայնքների (պատասխանները՝ Գծապատկեր 5–ում):



Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ 2020-2021 ուստարում մեծացել է ՀՖԿՍՊԻ դիմած ուսանողների տարածքային համախառն ընդգկվածությունը. ըստ նախորդ տարվա հարցման արդյունքների՝ Ինստիտուտ են եկել սովորելու 6 մարզից, իսկ այս տարի՝ 10–ը:

2019-2020 ուսումնական տարվա ցուցանիշների համեմատությամբ՝ այս տարի մեծ է նաև ՀՀ տարբեր քոլեջներից ՀՖԿՍՊԻ ընդունվողների թիվը՝ 11 ուսանող (6,6%): Հարցմանը մասնակցած ուսանողների 9,8%-ը (16 ուսանողներ) բուհ են ընդունվել Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջից (ԵՕՀՊՄՔ), իսկ 1,2%-ը (2 ուսանող)՝ Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջից (ԳՕՀՊՄՔ): 2020-2021 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ ընդունվածների թվում կան նաև ուսանողներ հարևան երկրներից (Վրաստան՝ 4 ուսանող, Իրան՝ 2 ուսանող):



Ինչպես ներկայացված է գծապատկեր 6-ում, հարցվածների կեսից ավելին (56,8%) ընկերներից է իմացել Ինստիտուտում սովորելու հնարավորությունների մասին: Ուսանողների 37,6%-ը նշել է, որ Ինստիտուտում ներկայումս սովորող ուսանողներն են ուղղորդել դեպի ՀՖԿՍՊԻ:

Ինստիտուտում գործող կրթական ծրագրերի մասին բուհի պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով տեղեկացել է ուսանողների միայն 15,4%-ը (25 ուսանող): Ուսանողների 4,8%-ը դեռևս վաղ տարիքից է իմացել Ինստիտուտի մասին, 4,2%-ը տեղեկացել է մարզչից, իսկ 1,9%-ը՝ բուհի կողմից կազմակերպվող մասնագիտության կողմնորոշման այցերից:

Դրական փաստ է, որ բուհի ներկայիս սովորողներն ու շրջանավարտները ապագա ուսանողներին խորհուրդ են տալիս դիմել հենց ՀՖԿՍՊԻ:



(Հարցը ենթադրում էր մի քանի պատասխանի հնարավորություն, այդ իսկ պատճառով տոկոսների ընդհանուր գումարը գերազանցում է 100%–ը:)

Ինչպես երևում է ներկայացված արդյունքներից, ՀՖԿՍՊԻ–ում սովորող ուսանողների մեծ մասը (60,5%) կարևորում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Պատասխանների համեմատաբար մեծ բաշխվածություն է կազմում «մասնագիտության նկատմամբ մեծ պահանջարկ» տարբերակը, որը ընտրվել է հիմնականում Ֆիզիկական վերականգնման ամբիոնի ուսանողների կողմից (44 ուսանող՝ ընդհանուր 67 մասնակիցներից):

Հարցվածներից 23-ը (14,2%) նշել է բարձր աշխատավարձով աշխատանք գտնելու ակնկալիքը, իսկ 14-ը (8,6%) ընդգծել է ինքնադրսևորման հնարավորությունը:

Պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ հարցվածներից 10 ուսանող ընտրել է «առանց գիտելիքի դիպլոմ ստանալու անհնարինությունը»՝ որպես կրթություն ստանալու կարևոր դրդապատճառ: Այս պատասխանի տարբերակը նախորդ հարցման ժամանակ հարցվածներից և ոչ մեկը չէր ընտրել: Նման ցուցանիշը թույլ է տալիս եզրակացնել, որ բուհ ընդունվողների մի մասը համոզված է, որ Ինստիտուտում գիտելիքը կարևորվում է և առանց մասնագիտական գիտելիքի դիպլոմ ստանալը անհնար է: Հարցվածներից 9 ուսանող (5,6%) նշել է, որ ՀՖԿՍՊԻ–ում սովորում է մասնագիտական որակավորմամբ դիպլոմ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով պատասխանների վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ ուսանողները մեծ ակնկալիքներ ունեն բուհում ձեռք բերելու համապատասխան մասնագիտական գիտելիքներ ու կարողություններ:

Հարցման մասնակիցները նշել են նաև՝ թե ինչու են որոշել սովորել ՀՖԿՍՊԻ–ում: Այս հարցը ենթադրում էր պատասխանի մի քանի տարբերակի հնարավորություն, այդ պատճառով պատասխանների տոկոսային ընդհանուր գումարը գերազանցում է 100%–ը (տես՝ Գծապատկեր 8):



Հարցի պատասխանների վերլուծությունից պարզ է դառնում, որ հարցվածների զգալի մասը (42%) դիմել է ՀՖԿՍՊԻ, քանի որ հետաքրքրված է բուհում գործող մասնագիտացումներով:

Ուսանողների 34,6%-ը կարևորել է Ինստիտուտի բարձրորակ կրթությունը, իսկ 31,5%-ին գրավել է մարզչամանկավարժական ոլորտի կրթությունը: Հետաքրքիր է, որ հարցվածներից 5 ուսանողի համար ՀՖԿՍՊԻ ընդունվելը ավելի հեշտ է, քան այլ բուհ, իսկ մեկ այլ դեպքում՝ ուսանողների (5 ուսանող) կարծիքով բուհում սովորելը հնարավորություն է տալիս համատեղել սպորտային մարզումները և ավելի մասնագիտանալ ոլորտում:

Մասնագիտության ընտրության մասին հարցին պատասխանել են հարցման գրեթե բոլոր մասնակիցները (պատասխանները՝ Գծապատկեր 9–ում):



Ներկայացված տվյալներից երևում է, որ հարցված ուսանողների մեծ մասին (45,3%) հոգեհարազատ է իր ընտրած մասնագիտությունը: Մեծ է նաև այն

ուսանողների թիվը (31,8%), ովքեր կարծում են, որ բուհը ավարտելուց հետո կկարողանան իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնել: Հարցվածների 7,1%-ը ծնողների խորհրդով է ընտրել իրենց մասնագիտությունը, 9,4%-ը նշում է, որ իր մասնագիտության պահանջարկը մեծ է, իսկ 4%-ի կարծիքով իր մասնագիտությունը մոդայիկ է:

Ուսանողները պատասխանել են «ՀՖԿՍՊԻ–ում ի՞նչն է Ձեզ դուր գալիս» հարցին. պատասխանները՝ Գծապատկեր 10–ում:



Ինչպես երևում է պատասխանների բաշխվածությունից, ուսանողները առանձնացնում են Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական բարձր որակները (28,6%), կարևորվել է նաև ուսանողների նկատմամբ անհատական վերաբերմունքը (24,8%) և ուսանողական հագեցած կյանքը (23%): Հարցվածների 15%-ին դասավանդման նորարարական մոտեցումներն ու մեթոդներն է դուր գալիս, իսկ 5,1%-ին՝ Ինստիտուտում առկա ռեսուրսներն ու ծառայությունները:

Հարցվածները ներկայացրել են նաև հակառակ հարցի պատասխաններն ու կարծիքները. պատսխանները՝ Գծապատկեր 11–ում:



Ինչպես երևում է գծապատկեր 11-ից ուսանողները հիմնականում դժգոհում են շենքային պայմաններից (20,3%), հեռավար ուսուցման պայմաններում լսարանային դասեր չլինելուց (13%), գնահատման համակարգից(12,5%), լսարանների կահավորանքից (12,5%): Ուսանողների 14%-ը նշում է, որ Ինստիտուտում իրեն ամեն ինչ դուր է գալիս: Հարցվողներին ՀՖԿՍՊԻ-ում դուր չեն գալիս նաև բուհի տեղեկատվական միջոցները (17 ուսանող), դասավանդման մեթոդները (16 ուսանող), ուսանողների նկատմամբ վերաբերմունքը (6 ուսանող):

Համեմատաբար ավելի ցածր վարկանիշ են ստացել պատասխանների հետևյալ տարբերակները՝

- ✓ Մասնագիտական գրականության պակասը-1,2%
- ✓ Բուֆետի բացակայությունը-1,2%
- ✓ Դասերի 80 րոպե լինելը-1,2%
- ✓ Մուտքի դուռը-0,6%
- ✓ Առարկաների անհամաչափ բաշխվածությունը-0,6%
- ✓ Բուհում դիմակ չկրելը-0,6%

Հարցված ուսանողները նշել են Ինստիտուտում կրթական գործընթացի կազմակերպման դրական կողմերը, որոնք ներկայացված է Գծապատկեր 12-ում:



Հարցմանը մասնակից ուսանողների կարծիքով՝ Ինստիտուտում պատրաստում են բարձր որակավորում ունեցող մասնագետներ (18,6%) և դասախոսների բարձր գիտելիքներն ու ուսանողներին ցուցաբերվող լավ վերաբերմունքը (18%) բուհում դրական կողմ է համարվում: Նկատենք նաև, որ հարցվածների 22,3%–ը ձեռնպահ է մնացել որևէ տեսակետ հայտնելուց:

Հարցված ուսանողների 5,5%–ը բուհում ուսումնառության դրական կողմ է համարում Ինստիտուտում տիրող մթնոլորտը, իսկ 3 ուսանողի կարծիքով էլ բուհում ուսումնառության դրական կողմեր չկան: Ըստ 2 ուսանողի ՀՖԿՍՊԻ–ում ուսումնառության դրական կողմեր են սպորտային կյանքը և մարզումները, իսկ 2 ուսանող էլ նշել է, որ իր սպասելիքները արդարացված են և ամեն օրը բուհում հագեցած ու հետաքրքիր է:

Համեմատաբար համաչափ են բաշխված պատասխանների հետևյալ տարբերակները՝

- ✓ Ազատ տեղաշարժը–1,2%
- ✓ Հետագայում աշխատանք ձեռք բերելը–1,2%
- ✓ Լեզվական գիտելիքների բարելավումը–0,6%
- ✓ Լսարանային դասերի լինելը–0,6%
- ✓ Խստությունը–0,6%
- ✓ Պրակտիկան–0,6%

Ուսանողների նշած պատասխանները թույլ են տալիս ենթադրել, որ ուսանողներին Ինստիտուտում գրավում է մասնագիտական բարձր և որակյալ

գիտելիք ստանալը, ինչպես նաև դասախոսների մի մասի մասնագիտական բարձր որակներն ու անհատական վերաբերմունքը ուսանողի նկատմամբ:

Հարցաթերթում ներառված բաց հարցերով ուսումնասիրվել են Ինստիտուտում ուսումնառության բացասական կողմերի վերաբերյալ սովորողների արտահայտած կարծիքներն ու գնահատականները (պատասխանները՝ Գծապատկեր 13–ում):



Պատասխանների վերլուծությունից երևում է, որ հարցմանը մասնակցած ուսանողների զգալի մասի (59,2%) կարծիքով Ինստիտուտում ուսումնառության բացասական կողմեր չկան, իսկ 19%-ը հարցին չի պատասխանել: Ուսանողները բուհում ուսումնառության բացասական կողմ են համարում հեռավար դասերը (3%), բուֆետի բացակայությունը (2,3%), դասաժամերի երկարությունը (2,3%), տեղեկատվության պակասը (2,3%), շենքային պայմանները և լսարանների կահավորանքը (2,3%): Հարցվածներից 4 ուսանող էլ դժվարացել է պատասխանել հարցին: Ինստիտուտի մարզական գույքի պակասը և հին լինելը բացասական կողմ է համարել 3 ուսանող, իսկ հարցման մասնակիցներից 3–ը դժգոհել է գնահատման համակարգից:

Համաչափ են բաշխվել գրքերի պակասից (1 ուսանող), որոշ դասախոսների վերաբերմունքից (1 ուսանող) և դասավանդման մեթոդներից (1 ուսանող) դժգոհություն հայտնողների պատասխանները: Հարցման մասնակիցներից մեկը բուհում ուսումնառության բացասական կողմ է համարում այն, որ ուսանողին հնարավորություն չի տրվում իր ուսումնառության մի հատվածը անցկացնել արտերկրում:

Հարցման միջոցով պարզել ենք նաև ուսանողների կարծիքը բուհում գործող գնահատման համակարգի վերաբերյալ:Գնահատման համակարգի թերությունների

վերաբերյալ ուսանողների կողմից տրված պատասխանները ներկայացված են Գծապատկեր 14-ում:



Ինչպես երևում է գծապատկեր 14-ից, հարցվածների զգալի մասի համար (55 ուսանող) հստակ չէ, թե ինչպես է ձևավորվում ամփոփիչ գնահատականը, իսկ 16,4%-ի համար (23 ուսանող) գնահատման համակարգի թերություն է դասախոսի սուբյեկտիվ մոտեցումը: Ուսանողների 15,7%-ի համար Ինստիտուտի գնահատման համակարգն ամբողջությամբ թերի է, իսկ 20 (14,3%) ուսանողի համար էլ բուհում գործող գնահատման համակարգը թերություններ չունի: Ուսանողներից 12,9%-ը նշում է, որ բուհում բարեկամական և ընկերական կապերի ազդեցությունը գնահատման համակարգի լուրջ թերություններից է, իսկ 1 ուսանող անհանգստություն է հայտնել, որ քննական թերթիկները միայն կպչուն ժապավենով ամրացնելը չի ապահովում դրանց լիարժեք գաղտնիությունը:



Ըստ գծապատկեր 15-ում ներկայացված տվյալների՝ ուսանողների մեծամասնությունը (88,5%) ուսումնառության ավարտին ցանկանում է ունենալ

մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներ և աշխատելու հնարավորություն: Ուսանողներից 22-ը (9,6%) կարևորում է միայն դիպլոմի առկայությունը, իսկ 2 ուսանող ընդգծում է՝ պրակտիկ դասընթացների ավելացման անհրաժեշտությունը:

Հետազոտության շրջանակում կարևոր էր պարզել նաև, թե որքան է բուհի ուսանողների՝ սեփական մասնագիտությամբ աշխատելու մոտիվացիայի և պատրաստակամության աստիճանը (Տե՛ս Գծապատկեր 16):



Ըստ հարցման արդյունքների՝ հարցված ուսանողների զգալի մասը (67,6%) պատրաստվում է բուհն ավարտելուց հետո իր մասնագիտությամբ աշխատել, իսկ 19,8%-ը դեռևս չի կողմնորոշվել: Ուսանողներից 15-ը արդեն աշխատում է իր մասնագիտությամբ, իսկ 6 ուսանող չի ցանկանում և չի պատրաստվում աշխատել իր մասնագիտությամբ:

Ուսանողների կողից տրված պատասխանների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսանողների շրջանում կա աշխատաշուկայում սեփական մասնագիտությամբ իրացվելու պահանջմունք, ինչպես նաև մեծ է ուսանողների աշխատանքային մոտիվացիան:

Հարցումը ամփոփող բաժնում ուսանողները կատարել են ներկայիս կրթական միջավայրի բարելավման առաջարկություններ, որոնք ընդհանրացված կերպով ներկայացված են աղյուսակ 1–ում:

Աղյուսակ 1

Կրթական միջավայրի բարելավման առաջարկություններ	Պատասխանների կրկնման հաճախականությունը
1.Առաջարկ չի ներկայացրել	90
2.Չի պատասխանել հարցին	33
3.Ամեն ինչ լավ է	16
4.Գրադարանը ապահովել մասնագիտական նոր գրականությամբ	7
5.Ներդնել դասավանդման նոր մեթոդներ	6
6.Ուսուցումը դարձնել լսարանային և պրակտիկ/ բարելավել ուսուցման որակը	9
7.Ավելի շուտ կազմակերպել պրակտիկան	4
8.Նորացնել մարզագույքն ու մարզաբազան	3

9.Ներդնել միջազգային տերմինաբանություն	3
10. Կազմակերպել մարզական տարբեր միջոցառումներ	3
11.Դասերի տևողությունը կրճատել մինչև 60 րոպե	2
12. Կիսամյակի ընթացքում ուսուցանել հիմնականում մասնագիտական առարկաներ և շատացնել մարզումները	4
13.Բացել բուֆետ	2
14.Համագործակցել օտարերկրյա բուհերի հետ	2
15.Բուհում ժամանցի վայր ստեղծել	2
16.Տարանջատել սանհանգույցը (աղջիկ-տղա)	1
17.Վերանայել գնահատման համակարգը	1
18.Բարելավել տեղեկատվական համակարգի գործունեությունը	1
19.Շենքը լիովին դարձնել հասանելի հենաշարժողական խնդիր ունեցողների համար	1
20.Ինստիտուտը վերանվանել համալսարանի և համապատասխանեցնել համալսարանի չափանիշներին	1
21.Ուսանողներին հնարավորություն տալ զուգահեռ մեկ այլ մասնագիտություն ուսումնասիրել	1
22.Կիսամյակին քննությունները կազմակերպել նաև բանավոր, ինչը հնարավորություն կտա դրսևորելու հաղորդակցվելու ունակություններ	1
23.Կիսամյակի վերջում կազմակերպել խորհրդատվություն քննական առարկաների, ստուգարքների վերաբերյալ	1
24.Սովորեցնել սպորտային բիզնես ստեղծելու գիտելքներ	1

Հատկանշական է, որ ուսանողների մեծ մասը (90 ուսանող) նշել է, որ որևէ առաջարկ չունի, իսկ 33 ուսանող ընդհանրապես չի պատասխանել հարցին: Համեմատաբար շատ են այն ուսանողները, ովքեր առաջարկել են, որ Ինստիտուտի գրադարանը ապահովված լինի մասնագիտական նոր գրականությամբ, բուհում ներդրվեն դասավանդման նոր մեթոդներ, ուսուցումը դառնա լսարանային և պրակտիկ: Հարցվածներից 4 ուսանող էլ ցանկություն է հայտնել, որ բուհում պրակտիկաները ավելի շուտ կազմակերպվեն (նկատի ունեն՝ 1–ին կուրսից):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՖԿՍՊԻ առաջին կուրսի ուսանողների հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրակացությունների և հետևությունների հանգել, ինչպես նաև պարզել ուսանողների մասնագիտության ընտրության կոնկրետ դրդապատճառներ:

Հարցման արդյունքների վերլուծությունը ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ՝

1. ՀՖԿՍՊԻ ընդունվում են ոչ միայն ՀՀ ողջ տարածքի տարբեր ուսումնական հաստատություններից, այլ նաև հարևան երկրներից:
2. Համեմատած նախորդ տարվա վերլուծության արդյունքների հետ, որոշակիորեն ավելացել է ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով բուհի մասին տեղեկացողների թիվը:
3. Ուսանողները ընդունվել են ՀՖԿՍՊԻ հիմնականում մասնագիտական կարողություններ և հմտություններ ձեռք բերելու նպատակով:
4. Դիմորդների շրջանում մեծացել է ՀՖԿՍՊԻ մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրությունը:
5. ՀՖԿՍՊԻ ընդունվողներին գրավել է բուհի բարձրորակ կրթությունը և մարզչամակավարժական ոլորտում մասնագիտանալը:
6. ՀՖԿՍՊԻ ընդունվողների մեծ մասը ակնկալում է, որ ուսուցման ավարտին ձեռք կբերի իր ընտրած մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ:
7. Ուսանողներին բուհում դուր է գալիս պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական բարձր որակները և ուսանողներին ցուցաբերվող անհատական վերաբերմունքը:
8. Ուսանողները իրենց դժգոհությունն են հայտնում բուհի գնահատման համակարգից և շենքային ու լսարանային պայմաններից:
9. ՀՖԿՍՊԻ-ում ուսումնառության բացասական կողմերն են՝ հեռավար դասերը, բուֆետի բացակայությունը, դասաժամերի երկարությունը, մարզական գույքի և մասնագիտական գրականության պակասը:
10. Բուհի առաջին կուրսի ուսանողների համար հստակ չէ, թե ինչպես է ձևավորվում ամփոփիչ գնահատականը:
11. ՀՖԿՍՊԻ ընդունված ուսանողների շրջանում մեծ է աշխատանքային մոտիվացիան և սեփական մասնագիտությամբ կայանալու պահանջմունքը:
12. Առաջին կուրսի ուսանողները առաջարկում են ներդնել դասավանդման նոր մեթոդներ, ուսուցումը դարձնել լսարանային, շատացնել մասնագիտական առարկաներն ու մարզումները:

Հիմք ընդունելով հարցումների արդյունքներն ու արված եզրահանգումները՝ ներկայացնում ենք հետևյալ ***առաջարկություններն ու երաշխավորությունները***.

1. Ավելի ակտիվացնել ՀՖԿՍՊԻ պաշտոնական տեղեկատվական հարթակների աշխատանքը:
2. Շարունակաբար կազմակերպել մասնագիտության կողմնորոշման այցեր ՀՀ տարբեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև կազմակերպել տեղեկատվական էքսկուրսիաներ Ինստիտուտի տարածքում դպրոցականների համար՝ Ինստիտուտին և մասնագիտություններին ավելի լավ ծանոթանալու նպատակով:
3. Ուսուցման գործընթացում մեծացնել պրակտիկայի կարևորությունը և տևողությունը:
4. Ինստիտուտի գրադարանը ապահովել անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ:
5. Դասավանդման գործընթացում ներդնել ինտերակտիվ և նորարարական մեթոդներ:
6. Նորացնել մարզագույքն ու մարզաբազան: